

ուսմանը չէր ճանչնար Մոսկուայի իրաւունքը այդ երկիրներուն վրայ...:

Այդպէս կը մեկնարանուէր, բնականաբար, Աշխատաւորականներու այդ նուրբ, փոքր ինչ մանուածապատ ու տարտամ բանաձեւը, որ տհաճութեամբ ընդունուեցաւ Մոսկուայի մէջ:

Վերջապէս, չէ՞ որ ՄակԴոնալդ եւ Հենտերոն ընկերակցական Միջազգայնականի ժողովներուն մէջ միշտ քուէարկեր են Վրաստանի — ինչպէս նաեւ Հայաստանի — անկախութեան բանաձեւը...:

Այս ամէնը, անշուշտ, խրախուսիչ ազդեակներ էին, բայց... վրացի դործիչները այնքան միամիտ էին, չեւ կը հաւատային թէ՛ Ռամզէյ ՄակԴոնալդ, վարչապետ դառնալով, մէկէն ի մէկ պիտի իրադրոճէր ընկերակցական Միջազգայնականի քուէարկած որոշումները...: Կը յուսային արդեօք թէ՛ Մեծն Բրիտանիոյ Աշխատաւորական կառավարութիւնը, Վրաստանի սիրոյն ձեռնոց պիտի նետէր սովետական Ռուսաստանի եւ Ազգերու Դաշնակցութիւնն ալ պիտի հանէր անոր դէմ, ստիպելով հեռացնել ոռւս զօրքը Վրաստանէն եւ վերադարձնել այդ երկրին իր անկախութիւնը:

Առեղծուած: Ապստամբութիւնը վերջացաւ վրացոց համար աննախընթաց աղէտով: Մոսկուան նոր ուժեր ճամբեց դէպի վրացական խորտոմէներու վայրերը եւ ճնշեց դանոնք բարբարոսարար, ինչպէս միշտ: Երկրի այլեւայլ անկիւններում սարքուեցաւ ճշմարիտ «արեան րազանիքներ», որոնց մէջ ոչ միայն խեղդուեցաւ ապստամբութիւնը, ծանր կարուստներ պատճառելով կռուող ժողովուրդին, այլ եւ ոչնչացաւ զնդակահարումներուն տարափին տակ դրեթէ ամբողջ ծաղիկը երբեմնի հզօր վրաց մենչեւիկ ընկերակցական կուսակցութեան, որ քանի մը տարի իր ձեռքին մէջ պահէր է հայրենիքի ճակատագիրը, որ կռուէր է երկար տարիներ իր երկրին ազատութեան համար, տուէր է բազմաթիւ նահատակներ եւ ազատութեան կարճատեւ շրջանին ճնշող մեծամասնութիւն ունէր Խորհրդարանի ու բոլոր ազգային հաստատութիւններու մէջ, ինչպէս Հ. Յ. Դաշնակցութիւնը Հայաստանի մէջ:

Եւ — ողբերգական պատկերը լրացնելու համար — ոչ մի արձագանգ արտասահմանում, ոչ մի բողոքի ու համակրանքի ցոյց Եւրոպայի մէջ այդ բարբարոս ճնշումներու, զնդակահարումներու առթիւ. ընդհակառակը՝ պաղ, սառցային բացասական վերաբերում մը ամենուրեք, անգամ ընկերակցական Միջազգայնականի եւ ՄակԴոնալդի մօտ շրջաններուն մէջ: Լոնտոն էինք ապստամբութիւնը խեղդուելէն անմիջապէս ետք, Միջազգայնականի հերթական խորհրդաժողովին (1924-ի աշնան) եւ անձամբ դիտեցինք այդ բացասական տրամադրութիւնը:

Ոչ միայն անտարբեր էին Եւրոպայի, մասնաւորապէս Անգլիոյ ընկերակցական շրջանները, այլ եւ խորապէս դժգոհ՝ որ վրացի ընկերները նեղ կացութեան մէջ դրեր են ՄակԴոնալդի կառավարութիւնը՝ այնքան միամիտ, անշրջաշայեաց քայլ մը ընելով եւ միամիտ յոյսեր կապելով Անգլիոյ նոր վարիչներու միջամտութեան հետ...:

* * *

ՄակԴոնալդ եւ Աշխատաւորական այլ պարագլուխները կը խորհին, որ սովետական ռէժիմի տապալումը ոռւս կայսրութեան ռեւէ երկրամասում՝ մէկ ժողովուրդի դործ չէ, որ այն կարող է դուրս գալ միայն, իբրեւ արդիւնք համայն Ռուսաստանի, բուն իսկ ոռւս ազգի ներքին ուժերու էությունիւնին:

Եւ կը հաւատան, որ այդ էությունիւնը պիտի քալէ անխուսափօրէն, որ այդ բոլշեւիկեան ռէժիմի տապալումը պիտի գայ ճակատագրական անհրաժեշտութեամբ: Ընդէ է, անոնք կը հուշակեն բոլշեւիկմը, որպէս ոռւս ցեղի մտայնութեան հարազատ ծնունդ, որպէս Ռուսաստանի յետմնաց վիճակին յատուկ երեւոյթ մը...: Բայց համոզուած են այնուամենայնիւ, որ այդ երեւոյթը ժամանակաւոր է, վասնզի չափազանց անտաւոր է:

Ոչ մի տեղ բոլշեւիկմը այնքան ատելի ու հալածական չէ, ինչպէս Անգլիոյ մէջ: Այդ մեծ երկրի քաղաքացիական բարքերուն մէջ դարերէ ի վեր այնքան խոր արմատներ է ձգել — Ազատութեան հաւատամքը: Եւ հէնց այդ է, որ վայրագօրէն կը ժխտուի Սովետներու աշխարհում: Ռուս բոլշեւիկմի բռնակա-